

տի բռնէ: Քաղաք զմարդ կը փոխէ: Չեր ինչիլըր
 Կայսեր քով յաղոցընելու կ'աշխատիմ: Սուրով
 իշխանն՝ որուն Կայսրը մեծամեծ բաներ խոստա-
 ցած է, ինձ իւր աջակցութիւնը չի զանաւար: Պո-
 ղոս իւր մօր վերջին կամքը կը յարգէ: — Ինչ
 ունիս, Ալեքսիս:»

Երիտասարդ տեղակալը սաստիկ այլա-
 րարձ մասունիչ ըրաւ երկու հոգի՝ որ թեւ
 թեւի ծամբուն միւս կողմէն կու գային. ասոնց
 միջին նշուածքը շողողուն սրը պէս Ալեքսիսին
 աչաց հանդիպեցաւ. եւ արհամարհանաց խօսք
 մը վերջնոյն լսելաց հասաւ:

«Ինչ կը նշանակէ Չեր գրգռութիւնը.
 գարմանալով հարցուց իշխանը: Չեմ հաս-
 կընար:» —

«Որ հասկընաք, ըսաւ Ալեքսիս պաղու-
 թեամբ. Ինչ կրնամ ընել ես՝ անցոր տեղա-
 կալս՝ Կայսեր պաշտպանիցին: Գրիգորովէ տե-
 ղակալն հիմալ պաշտպանի մը թեւն անցած
 առջեւէն անցաւ. նապուածքն իւր յաղթութիւնը
 եւ իմ թշուառութիւնս յայտնել կը դիտէր:»

Իշխանն ընդարձակածի պէս մնաց: «Չուսու
 պատանի, ըսաւ սաստիկ զգածեալ. կարծեմ
 երկար մնալ ի Ռուսաստան անկարելի պիտի
 ըլլայ քեզի: — Եղիկըլ ֆէռտորաւ:»

«Զարհուրելի խորհրդածութիւն է ինձ
 ֆէռտորայէ հրաժարելու մտածութիւնը:»

«Խօսքս ետ չեմ առնուր, յարեց իշխանը.
 տունս ասկէ վերն ալ յառաջուան պէս բաց
 է ձեզ. բայց պէտք չէք մոռնալ թէ անհնար է
 ըստ ռուսական սովորութեան՝ աղնուականաց
 մէջ ազգակցութիւն յառաջ բերել առանց
 հաւանութեան Կայսեր: Ինձի վստահ եղէք:
 Օրովիչ իշխանը ձեռքէն եկածն յօգուս Չեր
 գործածելու պիտի աշխատի:»

Երիտասարդ տեղակալին հրաժեշտ տուաւ
 եւ հեռացաւ:

Յամարապալ յառաջ վարեց Ալեքսիս իւր
 ծամբան: Ահանջը հասաւ Բեկիրսպուրի բազ-
 մութի եկեղեցեաց զանգակաց հնչիւնը՝ որ
 Կատարինեայ թաղման մեծաշուք հանգիստը կ'ի-
 մացընէր: Որ կարծէր թէ իւր երջանկութեան
 թաղումը կը կատարուի: Այնպիսի տաժանելի
 դիպք մէջ էր, որ կը կարծէր թէ միազգած
 գերեզմանն իրենց ինքն է՝ հանգչելու եւ մոր-
 ցուելու համար:

(Ը-բ-ն-ի-լ-ի-)



ԱՅԼԵԼԵԼԵԼԵ

ՆՈՐԱՆՈՒՐԵ

Պարզիկնի քարոզմանը:

Փրոֆ. Ռոստանեք ի Էդգարով՝ տեղոյն
 ձեւարանին նստին մէջ յայտնեց, որ որչափ կ'ե-
 րեւայ՝ յարողած է քաղցիկը (cancer) ներարեւու-
 թեամբ բուժելու կերպ մը գտնել: Երեսաց քաղց-
 կիկ ունեցող երկու հոգի, ինչպէս նաեւ կրծոց
 քաղցիկ ունեցող ուրիշ երկու հոգի բարորակն
 բժշկած է, որչափ կարելի է այժմուս վիճակէն զա-
 տել: Բայց թէ իւր դիւան առ հասարակամէն քաղց-
 կիկ պիտի կարող ըլլայ բուժել, ապագան պիտի
 ցուցնէ:

Խոսք ան համարմանոս գործիք մը:

Փարիզէն կը գրեն. Վերրիէ անուն քահանայ
 մը խուլերու լսելու գործիք մը հնարած է, որով
 խուլիկ համբոյր ականջն հետզհետէ կը սրի եւ կը
 լսեն: Այս կերպով խուլեհ համբոյ կամաց կ'առջ
 եւ Դանել Խօսող կ'ըլլայ. Bour-la-Reine հիւան-
 ղանոցին մէջ այս գործիքը 200 է աւելի խուլեհ հա-
 մբոց վնայ մեծամեծ արդիւնք կ'երեւայ:

ՏՆՏԵՍԿՆԵՆ

Պալտիժժ առարկաները պահել:

Որպէս զի ձգարիժէ խաղովակ, իցան եւն
 երկայնստեն պահելով չորսան եւ դիրտթեք մնան,
 նոյնիքը քրեւիկնի (creolin) 1/10 ջրային կամ ալ-
 քոհջուրային խառնուրդի մէջ ձգելու է: Գործածելէն
 յետոյ ջրով լաւ պէտք է լուշ, եւ գործածելէն
 ետեւ՝ նոյն խառնուրդի մէջ թողուլ:

ՓՆՆՐԱՆՈՒՐԵ

Էլիպիւքի ամենամանր գիտնը:

Էլափորի ամենամանր գիտնը ծանուցած էրիք
 նախորդ թիւով: Այժմ Փայիս 27 ին Նիւ-Եորքէն
 Times լազարոյն ուղղուած հեռագրէն կարող
 ենք աւելի մանրամասնութիւններ քաղել, զոր
 ինքնին Էլափոր յայտնած է, որ եւ այս գործիքին
 անունը դրած է Էլափօֆօր (Kinetograph): — Այս
 նոր գիտնը է բարդագոյնութիւն լուսանկարութեան
 եւ լեկկարպիկանութեան, այնպէս որ ասով կրնայ
 մէկն իւր սենեակը նստած ժամանակ պիտիակ կոտուի
 մը վնայ դիտել որեւէ թէւարան մ'եղած ներկայ-
 այման կենդանի մանրանկարն՝ ամենամանր շարժ-
 մանքը հանգեբո՞ւ, եւ կարող է նաեւ երգերն ու
 երաժշտութիւնը մտիկ բնել միեւնոյն ասան: Ընթ-
 ժադիքը թատերարեմիսն առջեւ սեղանի մը վնայ կը
 դրուի. եւ երբ երաժշտութիւնը կամ ներկայացումը
 կը սկսի, շարժագիւրն տեսանքն ու լսածը կը լուսա-
 նկարէ լուսանկարչական գործիքի ձեռքը, մէկ երկ-
 վայրկէնի մէջ 46 պատկեր նկարելով: Այս արա-

գութիւնը կը բաւէ նոյնչափ միջոցի մէջ Տարաւոր շարժումն ունէր նշանակելու։ Այս լուսանկարչական պատկերներն կրածին (calcium) լուսով կարելի է ուղիտակ կտաւի անցընել։ Ըարժագիրն ուրիշ բան չէ, բայց եթէ լուսանկարչական խաւարին անհետակ մը, որուն մէջ ժամացուցական գործիքով մը լուսանկարչական գոգող ծաղի մը (gelatine) մէջ դրանէ միւս գլանն անընդհատ կը դաւարի, գործիքն առնէ օդոյ ալիքն կը գգածի, որ միջոցին դրանները կը կենան անգգայի եղանակաւ՝ եւ այնպէս համահաստ պատկերը կը նկարուի։ Եթէ է գործիքը մեծ է, կարելի է նաեւ բնական մեծութեամբ տունուլ։ Այս առնուած պատկերներն կ'անցուցին յետոյ սպիտակ կտաւի վրայ այնպէս արագութեամբ, որ ետեւէ ետեւ նկարուած պատկերներն իրարու հետ միանալով ամբողջ շարժումը կը ներկայացնեն եւ ծայրն կը լսեցնեն։ Այս գործիքով՝ նաեւ ներկայացուցի վերջնական ետքը՝ իւրաքանչիւր ոք՝ որ նոյն գործիքն ունի, կարող պիտի ըլլայ տան մէջ ամբողջ ներկայացումը կրկնել։



ՔԱՂԱՔԱՔԱՔԱՔԱ ՏԵՍՈՒԹԱՅ

Վիեննա, 29 Յունիս 1891:

Ամսոյս մէջ նշանակութիւն ունեցող գլխաւոր դէպքերէն մէկն է Անգղիոյ եւ Փորթուկալի մէջ շրջադարձ դաշնակցութիւնը, որով Ափրիկէի մէջ եղած սահմանաց խնդիրը վերջնականապէս կ'որոշուի եւ շատ մ'անհամոյ գծութեանց վերջի կը տրուի։ Փորթուկալցիք շատ մը գաղթականութիւններ ունին, որոնք մայր երկրին մեծ օգուտ չեն բերեր. այժմ՝ խնդիր եղած է՝ անոնցմէ ոմանք ծախել ուրիշ տէրութեանց։

Ռումանիա անցնալ ամսոյն վերջերը՝ մեծ տոն ունէր, վասն զի այդի Կարոլ Թագաւորին զանակալութեան քսանհինգամայ տարեդարձը կը տօնէր։ Կարոլ ընտրուեցաւ Նաբոլէոն Գ. ի առաջարկութեամբն, եւ նոյն ժամանակ գերմանական - աւստրիական խուժուկեանց առթիւ՝ հազիւ ծպտեալ կրցաւ համախիւր նիկիրը, զոր շատ խնդգտուաւ. բայց այս քսանհինգ տարիննրու մէջ կերպարանափոխ եղաւ։

Աւստրիոյ կայսրը այս օրերս Փիւմէ նաւահանգիստն երթալով՝ ողջունուեցաւ նոյն միջոցին հոն գտնուող անգղիական նաւատորմիչն. այս դէպքն առիթ տուաւ լրագրաց երկարօրէն գրելու՝ որ այս երկու մեծ պետութեանց շահերը նման ըլլալով՝ իրարու հետ սերտ քարեկամութեան մէջ են։ Միւս կողմանէ Գերմանիոյ կայսրն ու կայսրուհին քիչ ժամանակէ Անգղիա պիտի երթան այցելութեան։ Այս ամէկն իբրեւ ստոյգ նշան առնուեցաւ՝ որ Անգղիա իւր շահոց պահանջներովն ըստ կարի կ'աշխատի Երկրի դաշնակցութեան այժմու ունեցած դիրքը պահել։ Անիկ որոշ ըսուեցաւ այս՝ Իտալիոյ համար, որուն հետ մինչեւ անգամ գաղտնի դաշնակցութեան մէջ ըլլալու լուր տարածուած էր։ Անգղիոյ պաշտօննայք ուրանալով հանդերձ այսպէսի դաշնակցութեան մի գոյութիւնը, յայտնի ըսին՝ որ անգղիական նաւատորմիւր պիտի պաշտպանէ Իտալական ծովերը, եթէ օտար տէրութիւն մի (Գաղղիա) յարձակի անոնց վրայ։ — Երկի Դաշնակցութիւնը կերպապէս նորոգուեցաւ այս օրերս վեց տարւոյ համար։

ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

ՌԵՍԻՄԵՆԿԱՆ

ՄԱՏՆԱՆԳՐԱՎԱՆ — Ստոյն - Կալիսթենայ (Pseudo-Callisthenes) վարոց Աղեքսանդրի ուսումնասիրութիւնը. 193:

ՊԱՏՄԱՎԱՆ — Պատմութիւն Պոլեմոնիայի եւ Մուտալիոյ հայ Գաղթականութեան. 199:

ՀԱՄԻՍՏԱՎԱՆ — Էշմաննի Աւետարանը. 204: (Պատկերաւ։)

ԱՋԳԱՐԱՎԱՆ — Մեր առակաց՝ Նոգականաց հետ յարաբերութիւն. 210:

ԳՐԱՎԱՆ — Սզգային հրատարակութիւնը 1890 տարւոյ. 214: — Անվանեալն թղթակցութիւն Պաւլոսի եւ Կորնթացոց. 217: — Կ. Պ. Կ. Աղաման. 219: (Պատկերաւ։)

ՌԵՐԱՅԵՐ

ՄԱՏՆՍՊ 8ՄԱՌԻՎԵՐԸ, Պատմական վէպ. 220:

ՈՍԵՆԻՈՍԵՆ

ՆՈՐԱՌԻՐ — Զաղոցեղի դարմանը. 223: — Խուլ եւ համբնեւ գործըք մը. 223:

ՏՆՏԵՍԱՎԱՆ — Չգալիթէ առարկաները պահել. 223:

ՄԱՆՐԱՌԻՐ — Էսթիմոս ամենամոտ գիւտը. 223:

ՔԱՂԱՔԱՔԱՔԱՔԱ ՏԵՍՈՒԹԱՅ 224:

ՀՐԱՏԱՐԱՐԻՉ ԵՒ ՊԱՏՄԱՆԱՆՏՈՒ ՆՈՐԱՎԱՐ

Գ. ՌԱՓԱՅԷԼ Կ. ՊԱՐԱՆՉ

ՎԻԵՆՆԱ. ՄԻԹԻՐԱՐԵՆՆ ԵՊԱՐԱՆ